## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԳԱՎԱԹ 2022» ՄՐՑԱՇԱՐ

07.04.2022 17:55

Հարգելի՛ գործընկերներ,

ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը 2022թ. ապրիլի 16-ին, ժամը 10:00-ին կազմակերպում է «Փաստաբանների շախմատի գավաթ 2022» մրցաշար:

Մրցաշարը տեղի կունենա ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 4-րդ հարկում (հասցեն՝ ք. Երևան Ջաքյան 7-2):

Շախմատի մրցաշարին կարող են մասնակցել ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանները և Փաստաբանական դպրոցի ունկնդիրները:

Մասնակցության ցանկության դեպքում անհրաժեշտ է մինչև սույն թվականի ապրիլի 12-ը զանգահարել (010 600 701) հեռախոսահամարին կամ հետադարձ հաղորդագրությամբ հայտնել մասնակցության մասին՝ նշելով Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի և հեռախոսի համարները:

Մրցաշարում 1-ից 8-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն պատվոգրերով և մեդալներով:

Մրցաշարի արդյունքներով լավագույն խաղացողներից  կձևավորվի ՀՀ փաստաբանների պալատի շախմատի հավաքական թիմը:

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })